Կարգապահական գործ թիվ ԿԳ-18146

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի մարտի 20-ի թիվ 62-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/36-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԻՆԳԱ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ինգա Ավագյանին (արտոնագիր թիվ 2011) **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Ավթանդիլ Մարտիաշվիլին **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ նաև՝ Պալատ**) հայտնել է, որ համաձայնության է եկել փաստաբան Ինգա Ավագյանի հետ 03.07.2018 թվականին նրան վճարել է 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար այնուհետև 10.08.2018 թվականին 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլար,սակայն փաստաբանը դիմողի հետ պայմանագիր չի կնքել:

Դիմողը նշել է, որ փաստաբանը իր իրավունքերի պաշտպանության համար ոչինչ չի արել, իր հետ փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանգիր չի կնքել, խուսափում է իր հետ հանդիպումից:

Դիմողը խնդրել է Ինգա Ավագյանի նկատմամբ միջոցներ ձեռնարկել և պարտավորեցնել հետ վերադարձնելու վճարած գումարը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 26.11.2018թ. թիվ 409-Ա/ԿԳ-18146 որոշմամբ փաստաբան Ինգա Ավագյանի (արտոնագիր թիվ 2011) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.7.2, 3.1.3, 3.6.1 և 3.6.2 ենթակետերի խախտման հատկանիշներով:

28.11.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

25.01.2019 թվականին Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով ըստ էության հայտնել է, որ կարող է ներկայացնել համապատասխան ապացույցներ, որ փաստաբան Ինգա Ավագյանի իրեն այցելել է երկու անգամ:

Դիմողը նեշել է, որ վերջինիս փոխանցել է 400 (չորս հարյուր) ԱՄՆ դոլար և փաստաբանը պայմանագիր չի կնքել՝ նշելով, որ դրա անհրաժեշտությունը չկա:

Դիմողը նաև նշել է, որ գումարը ստանալուց հետո, իրեն այցելության չի գնացել քրեակատարողական հիմնարկ, կազմել է միայն Դատախազությանը դիմում քրեական գործը վերանայելու, որը սակայն մերժվել է:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2.<u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

06.11.2018 թվականին փաստաբան Ինգա Ավագյանը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ իր կողմից հավուր պատշաճի են իրականացվել իր պարտավորությունները, Ավթանդիլ Մարտիաշվիլին չունի որևէ հիմնավոր պատճառ դժգոհելու իր կողմից մատուցված ծառայություններից: Ընդհակառակը հենց Ավթանդիլ Մուրտիաշվիլին ունի վճարային պարտավորություն իր նկատմամբ: Ըստ էության Ավթանդիլ Մարտիաշվիլիի կողմից ներկայացված դիմումում նշված տեղեկությունները, որոնք վերաբերվում են իր կողմից ծառայությունների մատուցմանը ճիշտ չեն, հնարածին են, քանի որ նա փորձում է պարզապես օգտագործել իր օտարերկրյա քաղաքացու կարգավիճակը, որպեսզի հետ ստանա ծառայությունների համար վճարված գումարները:

Փաստաբան Ինգա Ավագյանը նշել է նաև, որ իր կողմից իրականացվել են հետևյալ գործողությունները՝ ծանոթացել է գործի նյութերին ամբողջությամբ, որը բավականին ծավալուն է եղել և գերազանցել է 10-ից ավել հատորներ, բանավոր խորհրդատվություն է տվել տասնյակ անգամ հեռախոսազանգի միջոցով, 3 անգամ այցելել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ և տեսակցություն է ունեցել Ավթանդիլ Մարտիաշվիլիի հետ, կազմել է բողոք ուղղված ՀՀ գլխավոր դատախազությանը և ուղարկել այն քննարկման, դիմումը թարգմանել է վրացերեն լեզվով և ուղարկել է Ավթանդիլ Մարտիաշվիլիին, ստացել է ՀՀ Գլխավոր դատախազությունից ի պատասխան իր կողմից ներկայացված բողոքի և նախապատրաստել է վճռաբեկ բողոք նոր հանգամանքներով, որի ներկայացումը նաև Դիմողի առաջարկով է հետաձգվել, կապված համաներման ակտի վերջնական ընդունման հետ:

Փաստաբան Ինգա Ավագյանը նշել է, որ մեկ դրամ գումարի հետ վերադարձման որևէ պարտավորություն չունի նրա նկատմամբ և վերջինս էլ չի կարող նման պահանջի իրավունք ունենալ իր նկատմամբ:

06"12"2018 թվականին փաստաբան Ինգա Ավագյանը ներկայացրել է

բացատրութկուն և նշել, որ իր և դիմող Ավթանդիլ Մարտիաշվիլիի միջև առկա է եղել պայմանավորվածություն վերջինիս նկատմամբ հարուցված քրեական գործը վերանայելու համար դատախազություն, ապա Դատարան դիմելու համար, որի դիմաց պետք է վճարվեր 1000 ԱՄՆ դոլար գումար:

Համաձայն պայմանավորվածության գումարը պետք է վճարեր մաս-մաս, ըստ համապատասխան փուլերի այն է, 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլար գումարը ՀՀ գլխավոր դատախազին դիմում գրելու համար և 700 (յոթ հարյուր) ԱՄՆ դոլար դատական կարգով բողոք ներկայացնելու համար:

Դիմողի կողմից վճարվել է 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլար գումարը, որի դիմաց մատուցել է բարեխիղճ իրավաբանական ծառայություններ՝ կազմել է դիմում բողոքը ՀՀ գլխավոր դատախազին, որն էլ թարգմանվել է վրացերեն լեզվով և տրամադրել է Ավթանդիլ Մարտիաշվիլիին:

Դիմողի խնդրանքով պայմանավորվածություններ է ունեցել լրագրողների հետ, ոպեսզի հանդիպումներ կազմակերպվեր նրա հետ, որի մասին էլ պարբերաբար տեղեկացրել է Դիմողին :Իր կողմից կատարված ծառայությաունները ինչպես նաև գործի ընթացքի հետ կապված մանրամասները իրազեկվել է ինչպես հանդիպումների ժամանակ այնպես էլ sms հաղորդագրությունների միջոցով և viber ինտերնետային կապի միջոցով:

Փաստաբան Ինգա Ավագյանը հայտնել է նաև, որ իր և դիմողի պայմանավորվածության համաձայն դիմողի հարազատներից որևէ մեկը պետք է այցելեր իրեն և կնքվեր համապատասխան պայմանագիրը, նկատի ունենալով այն, որ վճարողը հանդիսանում է իր ընտանիքի անդամները:

Պատասխանողը նշել է նաև,որ դատական կարգով բողոքը մուտք չի եղել այն պատճառով, քանի որ պայմանավորվածության համաձայն պետք է սպասեին համաներում հայտարարելու մասին ՀՀ օրենքի հրապարակմանը և ընդունմանը, ինչպես նաև այն հանգամանքին, որ տեղափոխել էին հանրապետական հիվանդանոց հետազոտության համար և հնարավոր էր առկա եզրակացություններից հետո անհրաժեշտություն չլիներ Դատական կարգով բողոքը ներկայացնելու համար:

Փաստաբան Ինգա Ավագյանը բացատրությանը կից ներկայացվել է հեռախոսազանգերի, sms հաղորդագրությունների, viber ինտերնետային կայքի միջոցով ունեցած խոսակցությունների (հաղորդագրությունների) վերաբերյալ ապացույցները:

Փաստաբան Ինգա Ավագյանը թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

23.01.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ՝ Նարինե Սարգսյանը կազմել է եզրակացություն: Նախապատրաստողը եզրակացրել է, որ փաստաբան Ինգա Ավագյանի արարքում բացակայում են Պալատի Ընդհանուր ժողովի 11.02.2012թ. թիվ 1/4Լ որոշման հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.6.1, և 3.6.2. ենթակետերի պահանջների խախտման

հատկանիշները, առկա է միայն 3.1.3 ենթակետի խախտման հատկանիշը, քանի որ իրականում պայմանագիր չի կնքվել, քանի որ պատասխանողը այն չի ներկայացրել, և բնականաբար փաստաբանը կաշկանդված չի եղել այմանագիր կնքել հենց դիմողի հետ, քանի որ ինչպես պատասխանողը նշել է գումարը վճարվել է հենց պատասխանողի կողմից:

01.02.2019թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի մարտի 20-ին, ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմող Ավթանդիլ Մարտիաշվիլիի ներկայացուցիչը հանդիսացել է Պատասխանող փաստաբան Ինգա Ավագյանը:
2. Դիմող Ավթանդիլ Մարտիաշվիլիի և Պատասխանող փաստաբան Ինգա Ավագյանի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքվել:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի կողմից ներկայացված դիմումով, Պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Ինգա Ավագյանը (արտոնագիր 2011, ստացված՝ 28.11.2015թ.) նկատմամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբկարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 26.11.2018թ. թիվ 409-Ա/ԿԳ-18146):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ինգա Ավագյանը ենթակա է պատասխանատվության Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտման համար, իսկ

Կանոնագրքին 2.7.2, 3.6.1 և 3.6.2 ենթակետերի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

7. 1 Կանոնագրքի 3"1"3 ենթակետերի խախտման մասով.

Կանոնագրքի **3.1.3** ենթակետի համաձայն՝ *գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Սույն դրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի բարեխիղճ, փոխադարձաբար արդյունավետ և գործարար շրջանառության էթիկայի տեսանկյունից ընդունելի գործելակերպի համար: Միևնույն ժամանակ, փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագիրը թույլ է տալիս խուսափել տարաձայնություններից կամ դրանց առաջացման դեպքում ծառայում է վեճի լուծման ապացուցողական հիմք:

Կանոնագրքի 3.1.3 կետով գրավոր պայմանագրի առումով արվում է մեկ բացառություն՝ թույլատրելով փաստաբանին վստահորդի հետ գրավոր պայմանագիր կնքել նրա՝ հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից 2 ամսվա ընթացքում, այն էլ, եթե առկա են գործի որոշ առանձնահատուկ հանգամանքներ, որոնք կամ գործի ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Կանոնագրքով, մեծ կարևորություն տալով փաստաբանի և վստահորդի միջև իրավահարաբերությունների գրավոր ամրագրմանը, ցանկալի է համարվում ընդհուպ անհատույց հիմունքներով իրավաբանական օգնության ցուցաբերումը գրավոր պայմանագրի հիման վրա (3.1.5 ենթակետ): Ընդ որում, Կանոնագրքի 3.1.3 կետի շարադրանքից հետևում է, որ գրավոր պայմանագիր կնքելու պարտականությունը հստակորեն դրվում է փաստաբանի վրա: Այսինքն, եթե պատվիրատուն կամ վստահորդը չեն պնդում գրավոր պայմանագրի կնքման վրա կամ ցանկանում են փաստաբանի հետ հարաբերվել՝ առանց իրավական հիմքի, փաստաբանը պարտավոր է նրանց իրազեկել, բացատրել դրա անթույլատրելիության վերաբերյալ և հրաժարվել առանց պայմանագրի՝ նրանց իրավաբանական ծառայություններ մատուցելուց:

Ելնելով սույն գործի փաստերից՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը խախտել է Կանոնագրքի 3.1.3 կետի պահանջը, քանի որ գործում առկա ապացույցները՝ Պատասխանողի և Դիմողի կողմից ներկայացված բացատրությունները ապացուցում են, որ Դիմող վճարովի իրավական օգնություն է ցույց տվել Ավթանդիլ Մարտիաշվիլիին, սակայն չի կնքել իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր: Իսկ ինչ վերաբերում է Պատասխանողի այն պնդմանը, որ իր և Դիմողի պայմանավորվածության համաձայն Դիմողի հարազատներից որևէ մեկը պետք է այցելեր իրեն և կնքվեր համապատասխան պայմանագիրը, նկատի ունենալով այն, որ վճարողը հանդիսանում է իր ընտանիքի անդամները, Խորհուրդը հիմնավոր չի համարում, քանի որ Պատասխանողը կաշկանդված չի եղել պայամանգիր կնքել հենց Դիմողի հետ:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ինգա Ավագյանը թույլ է տվել Կանոնագրքի 3.1.3 ենթակետերի խախտում, ինչի համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք (…):

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է կիրառել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

7. 2 Կանոնագրքի 2.7.2, 3.6.1 և 3.6.2 ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Կանոնագրքի 3.6.2 ենթակետի համաձայն՝ *տեղեկացումը կարող է կատարվել հեռախոսի, էլեկտրոնային փոստի, նամակագրության կամ անձնական զրույցների միջոցով:*

Սույն կանոնների նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանը, պարտավոր է բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր վստահորդին, ինչը չի կարող լինել բավարար՝ առանց իր վստահորդի հետ մշտական կամ պարբերական կապի, տեղեկատվության փոխանակման, գործի ընթացքի վերաբերյալ փաստաբանի կողմից վստահորդին անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման, գործի հնարավոր արդյունքի և վստահորդի քայլերի վերաբերյալ պատշաճ ջանասիրությամբ տրված խորհրդատվության*:*

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողի կողմից Կանոնագրքի 2.7.2, 3.6.1 և 3.6.2 ենթակետերի խախտում թույլ տալու հանգամանքը: Դեռ ավելին Պատասխանողի կողմից ներկայացվել է Viber հավելվածով կատարված Խոսակցությունների (հաղորդագրությունների) պատճենները, որից երևում է որ Պատասխանողը պատասխանել է Դիմողի հարցերին և կապ պահպանել վերջինիս հետ: Ինչպես նաև Դիմողի իրավունքների պաշտպանության համար դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Ա. Դավթյանին:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 2.7.2, 3.6.1 և 3.6.2 ենթակետերի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ինգա Ավագյանին (արտոնագիր՝ 2011) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 3"1"3 ենթակետի խախտման համար:

2. Փաստաբան Ինգա Ավագյանի (արտոնագիր՝ 2011) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Փաստաբան Ինգա Ավագյանի (արտոնագիր՝ 2011) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 2.7.2, 3.6.1 և 3.6.2 ենթակետերի մասով՝ կարճել:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

20 մարտի 2019թ.
թիվ ԿԳ/36-Ա
ք. Երևան